ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2020 թվականի թիվ 124 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի «ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» N 27 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՄԵՆՕՐՅԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Պարետի 2020 թվականի ապրիլի 11-ի թիվ Ց/58-2020 ցուցումը՝

ո ր ո շ ում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Պարետի 2020 թվականի մարտի 31-ի «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» N 27 որոշման հավելվածով հաստատված գործողությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում ամենօրյա մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծել մարզային հանձնախումբ հետևյալ կազմով՝

Հանձնախմբի ղեկավար՝
Հայկ Փաշինյան – ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալ,
Անդամներ՝
Ռ. Տիգրանյան – Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
Գ. Հարությունյան – Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ,
Գ. Մելիքբեկյան – Իրավաբանական բաժնի վարիչ,
Վ. Սուքոյան – Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,
Ա. Սարգսյան – Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ,

Տարածաշրջանային պատասխանատուներ՝

Դ.Մխիթարյան – ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻՄ և համայնքային ծառայության հարցերի բաժնի վարիչ,
Վ.Հովհաննիսյան - ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻՄ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ,
Խ.Ամիրաղյան - ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻՄ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ:
2.Հաստատել հանձնախմբի աշխատակարգը համաձայն հավելվածի /կցվում է/:

3. Հանձնախմբի ղեկավարին՝
1/ ամենօրյա ռեժիմով իրականացնել մշտադիտարկում և խնդիրների վերաբերյալ զեկուցել մարզպետին,
2/կազմել կատարված աշխատանքների մասին ամփոփ հաշվետվություն ՀՀ Պարետ, փոխվարչապետ Տ.Ավինյանի գրասենյակ յուրաքանչյուր երկուշաբթի ներկայացնելու համար:

Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

4/13/2020

X

Signed by: CHOBANYAN HAYK 1503730050
2020թ. ապրիլի 13
ք.Իջևան

«Հավելված»

ՀՀ Տավուշի մարզպետի 2020 թվականի

ապրիլի 12 թիվ 124-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի «ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» N 27 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՄԵՆՕՐՅԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ

1. Համագործակցելով ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարությանը ենթակա տեսչական մարմինների հետ՝ սահմանել ամենօրյա մշտադիտարկում ՀՀ Պարետի՝ 2020 թվականի մարտի 31-ի N 27 որոշման N 1 հավելվածով հաստատված «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների», որոշման N 2 հավելվածով սահմանված «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների» և որոշման N 3 հավելվածով սահմանված՝ «Կազմակերպությունների կողմից պահպանման ենթակա, նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելուն ուղղված կանոններ»-ի պահպանման նկատմամբ՝ ներգրավելով ՀՀ Տավուշի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ուժերն ու միջոցները:
2. Միջոցներ ձեռնարկել սույն ցուցման 1-ին կետում նշված աշխատանքների արդյունքում արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելով ՀՀ ոստիկանության կամ ՀՀ կառավարությանը ենթակա համապատասխան տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումներին:
3. Սույն ցուցման 1-ին կետում նշված աշխատանքներում ՀՀ Տավուշի մարզպետարանին աջակցելու նպատակով ըստ անհրաժեշտության, բացառապես կամավորության սկզբունքով և պայմանով, որ դա չի խաթարի տվյալ մարմնի բնականոն գործունեությունը, կարող են ներգրավվել ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողները և դատական դեպարտամենտի դատական կարգադրիչները:

ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ա.Գևորգյան